

ԿՈՆՎԵՆՑԻԱ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռումինիայի կառավարության միջև անասնաբուժության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ռումինիայի կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր, առաջնորդվելով անասնաբուժության բնագավառում փոխադարձ համագործակցությունն ընդլայնելու և զարգացնելու ցանկությամբ, որպեսզի ապահովվի համապատասխան պաշտպանություն կենդանիների հիվանդությունների և, առողջապահական առումով, անապահով կենդանական ծագմամբ արտադրանքի հարուցած վտանգների դեմ, ղեկավարվելով երկու երկրների միջև հետագա հարաբերությունները զարգացնելու ցանկությամբ, կենդանիների, կենդանական ծագման արտադրանքի և անասնակերի առևտուրը դյուրացնելու նպատակով,

որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը.

Հոդված 1

Կողմերը կհամագործակցեն՝ պաշտպանելու համար իրենց պետության տարածքները կենդանիների հիվանդությունների փոխանցումից՝ կենդանիների, կենդանական նյութերի, կենդանական ծագման արտադրանքի, կենսաբանական նյութերի, ինչպես նաև անասնակերի և կենդանիների հիվանդությունների պոտենցիալ աղբյուր հանդիսացող օբյեկտների ներկրման, արտահանման և տարանցման ընթացքում:

Հոդված 2

Կողմերի համապատասխան անասնաբուժական մարմիններն են.

- 1) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության և բնօգտագործման նախարարության անասնաբուժական պետական տեսչությունը,
- 2) Ռումինիայի գյուղատնտեսության և պարենի նախարարության պետական անասնաբուժական սանիտարական գործակալությունը:

Հոդված 3

Համապատասխան անասնաբուժական մարմինները կհամաձայնեն փոխադարձ գործունեության վերաբերյալ, որպեսզի պարզեցվի սահմանում կենդանիների և անասնաբուժական վերահսկման ենթակա ապրանքների ներկրման, արտահանման և տարանցման ընթացքում անասնաբուժական ընթացակարգերի կատարումը: Փոխադարձ գործունեությունը կհամաձայնեցվի՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և Ռումինիայի օրենսդրության կանոնները, ինչպես նաև Եվրոպական միության սկզբունքները:

Հոդված 4

1. Համապատասխան անասնաբուժական մարմինները.

ա) անմիջապես կտեղեկացնեն միմյանց իրենց երկրների տարածքներում Միջազգային համաձարակային բյուրոյի «Ա» Հավելվածում բնորոշված հիվանդությունների հայտնաբերման մասին, ներառյալ՝ տեսակների անունները, հիվանդությամբ վարակված կենդանիների քանակը և հիվանդության տարածման տարածքը, ախտորոշման հիմքը և հիվանդության դեմ պայքարի ձեռք առնված միջոցների տեսակը,

բ) ամեն ամիս կփոխանակեն Միջազգային համաձարակային բյուրոյի «Ա» և «Բ» Հավելվածներում բնորոշված կենդանիների վարակիչ հիվանդությունների վերաբերյալ տվյալներ պարունակող պաշտոնական տեղեկագրերը,

գ) կփոխանակեն հավաստագրերի օրինակները, որոնք սահմանում են կենդանիների, կենդանական ծագման սննդամթերքի և անասնակերի ներկրման պայմանները, և կտեղեկացնեն միմյանց այդ փաստաթղթերում կատարված փոփոխությունների և լրացումների վերաբերյալ:

2. Կողմերի համապատասխան անասնաբուժական մարմինները անմիջապես կտեղեկացնեն միմյանց հարևան երկրների տարածքներում Միջազգային համաձարակային բյուրոյի «Ա» Հավելվածում նշված հիվանդությունների հայտնաբերման դեպքում իրենց ձեռնարկած կանխարգելիչ միջոցների վերաբերյալ:

Հոդված 5

Կողմերը կաջակցեն համագործակցությանը համապատասխան անասնաբուժական մարմինների և Հայաստանի Հանրապետության և Ռումինիայի այն հաստատությունների միջև, որոնք օգտագործում են անասնաբուժության բնագավառում գիտական և տեխնոլոգիական ձեռքբերումները, հետևյալ եղանակներով.

ա) մասնագիտական հարցերի բնագավառում փորձի և գիտելիքների փոխանակում,

բ) համագործակցություն համապատասխան անասնաբուժական մարմինների և հաստատությունների միջև,

գ) տեղեկության փոխանակում, մասնագետների և գիտական անձնակազմի աշխատանքային այցելություններ,

դ) մասնագիտական ամսագրերի և այլ անասնաբուժական հրատարակությունների փոխանակում,

ե) սանհիտարական անասնաբուժական գործունեության և այդ բնագավառի վերաբերյալ իրավական դրույթների և կանոնների մասին տեղեկության փոխանակում:

Կողմերը կօգնեն իրենց համապատասխան անասնաբուժական մարմիններին՝ իրականացնելու փոխադարձ հսկողություն սննդամթերք և կենդանական ծագման այլ արտադրանք արտահանող հաստատություններում:

Հոդված 6

1. Տեղեկության և փաստաթղթերի փոխանակման հետ կապված ծախսերը կկատարվեն հետևյալ կերպ.

ա) Կողմերի համապատասխան անասնաբուժական մարմինների միջև տեղեկության, մասնագիտական ամսագրերի և գրավոր նյութերի փոխանակման հետ կապված ծախսերը կկատարի ուղարկող Կողմը:

բ) Այն դեպքում, երբ մի Կողմը խնդրում է մյուս Կողմին մասնագետներ և գիտական անձնակազմ ուղարկել, ծախսերը կատարում է խնդրանք ներկայացնող Կողմը, իսկ եթե երկու Կողմերը համաձայնվել են անցկացնել մասնագետների կոնֆերանս, յուրաքանչյուր Կողմ կատարում է ծախսերը իր պատվիրակության համար, կամ ծախսերը ֆինանսավորվում են փոխադարձ հիմունքներով՝ ըստ համաձայնագրերի:

Հոդված 7

1. Անհրաժեշտության դեպքում Կողմերի համապատասխան անասնաբուժական մարմինները կհանդիպեն փոխհամաձայնեցված վայրում և ժամանակ:

2. Սույն Համաձայնագրի մեկնաբանության կամ կիրառման ժամանակ ցանկացած տարաձայնություն Կողմերի համապատասխան անասնաբուժական մարմինների միջև պետք է լուծվի ուղղակի բանակցությունների միջոցով:

3. Եթե 2-րդ կետում նշված բանակցությունները չհանգեցնեն փոխադարձ համաձայնության, սույն Համաձայնագրի իրականացման

վերաբերյալ Կողմերի տարածայնությունները կուսումնասիրվեն Համատեղ հանձնաժողովի կողմից:

Հանձնաժողովը յուրաքանչյուր կողմից կազմված կլինի երկու անասնաբույժից և մեկ իրավաբանից: Հանձնաժողովի նիստերը տեղի կունենան Կողմերից մեկի խնդրանքով, նրա տարածքում՝ խնդրանք ներկայացնելու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում:

Նիստերը հաջորդաբար կնախագահեն երկու պատվիրակության անդամները:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրը չի ազդում Կողմերի այն իրավունքների և պարտավորությունների վրա, որոնք բխում են սանիտարական անասնաբուժության բնագավառում Կողմերի կնքած այլ միջազգային համաձայնագրերից:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում երկրորդ ծանուցումից հետո՝ 60-րդ օրը, որով Կողմերը ծանուցում են միմյանց իրենց օրենսդրությամբ պահանջվող բոլոր ընթացակարգերի կատարման մասին:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրը կնքվել է հինգ տարի ժամանակով: Նրա գործողությունն ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ 5 տարվա համար, եթե Կողմերից որևէ մեկը գործողության ժամկետի ավարտից առնվազն վեց ամիս առաջ չծանուցի մյուս Կողմին Համաձայնագիրը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Բուխարեստ քաղաքում 2000 թվականի ապրիլի 5-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ռումիներեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Մեկնաբանության տարբերության դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2001 թվականի փետրվարի 19-ից: